№ 70 ՇԱԲԱԹ 1883 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Հրատարակումն շաբաթը երեք անգամ:

Խմբագրատունը բացէ 2—5 ժամը կէս օրից յետոյ:

Տարեկան բաժանորդագինն է Երևանում 1 րուբ.

ԵՐԵՒԱՆԻ
ՁԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցայտարարութիւնները ընդունւում են հայերէն, ռուսերէն և թուրքերէն լեզուներով:

Ցայտարարութիւնների համար վճարվում է իւրաքանչիւր բառին 2 կոպ. — մի անգամ, 3 կոպ. — երկու անգամ իսկ մեծացած անգամների համար պիտի աւելացնել կէս կէս կոպէկ:

Խմբագրատունը գտնվում է Երևանում, Աստաֆեան և Էչմիածնի փողոցների անկիւնում, նոյն տէր Գրիգորեանցի տարածում:

ԼՐԵՐ

Լսում ենք, որ քաղաքիս թուրք աղգաբնակութիւնը խնդիր է տուել Նորին Պայծառափայլութեան, որով խնդրում է հաւասար իրաւունք ունենալ հայ աղգաբնակութեան հետ քաղաքային իրաւասութեան մէջ: Նորին Պայծառափայլութիւնը յայտնել է, թէ ինքը արդէն այդ մասին միջնորդել է նախարարութեանը և այժմ ևս խոստացել է հետապնդել ի նկատի ունենալով մօտաւոր ընտրութիւնների ժամանակը: Այս լուրը խորհրդածութեան առարկայ է դարձել հայ աղգաբնակութեան մէջ. հայերի ասելով քաղաքային մուտքերի երեք քառորդականը վճարում է հայ հասարակութիւնը, իսկ $\frac{1}{4}$-ը թուրք հասարակութիւնը. ասում են՝ ինչպէս կարելի է, որ երեք անգամ աւելի տուրք տուող հայերը, որոնք թվով նոյնպէս աւելի են քան թէ թուրքերը, միևնոյն իրաւունքն ունենան ձայների հաւասարութեան նկատմամբ. բայի դրանից, յայտնի է, որ նոյն իսկ քաղաքային վարչութեան օրէնքն ևս քրիստոնեաներին աւելի իրաւունք է տուած, քան թէ ոչ-քրիստոնեաներին: Ցայտնի է որ իրաւասուների $\frac{2}{3}$-ը պէտք է լինի օրէնքով քրիստոնեաներից, իսկ $\frac{1}{3}$ ոչ-քրիստոնեաներից:

—

Նոցին կայսերական բարձրութեանց թագապրութեան աւելիւ շնորհուած ապահինների գումարը եղաւ. Երևանում 5000 ր., սորանից քաղաքային ուպրաւան 1700 ր. ընծայել է Երևանի հայ աղքատներին, իսկ 3300ը —թուրք աղքատներին. այժմ իրասուսները հարցնում են վարչութեանը թէ ինչ հիման վերայ է այդ անհաւասար բաժանումնքը արել հայերի և թուրքերի մէջ, քանի որ արդարութիւնը կպահանջէր, որ գոնէ կէսը հայերին ընորհուէր:

—

Ամսոյս 18-ին մեծ կորուստ ունեցաւ Երևանի հայ մանուկ սերունդը. մեռաւ ուսուցիչ երիտասարդ Յակովբ Ղազարեանցը:

Յուղարկաւորութիւնը, որ կատարուեցաւ 20-ին ամսոյս ուրբաթ և զբաղիչ էր. Երևանի Թեմական Դպրոցի աշակերտները խլութեանց ուսուցիչներով ու հոգևորականներով, Երևանի երիտասարդութիւնը պ. քաղաքագլխի հետ միասին շրջապատողն ու մինչև գերեզման ուղեւորողներն էին նորա անշունչ դիակին, բոլոր եկեղեցաց հոգևորական դասն եկել էր պատուելու երիտասարդ ուսուցչի սիշատակը. բացակայ էր միայն, որպէս և միշտ այսպիսի դէպքերում, Երևանի անտարբեր հասարակութիւնը: Շատերը կամենում էին մի քանի խօսքով խլութեանց սրտի վիշտը յայտնել այս զգալի կորստի համար, բայց երկու ճառով ամենքի փափաքն էլ կատարուեցաւ: Հանգուցեալին ընկեր պ. Պանճուլաշեանը եկեղեցում ծանօթացրեց համառօտիւ հանգուցեալ անցեալի հետ և պ. Թ. Մելիքեանցը հանգստարանում մի քանի խօսքով նկարագրեց նորա գործունէութիւնը: Պ. Մելիքեանցը ասաց, որ մեր առաջը դրած է ազգային դպրոցական մշակի դիակ. որի աշխատանքի ու թափած քրտքի դէմ բաւական չեն ամենաառատ վարձատրութիւններ, համակրական խօսքերն. ներբողներ: Շատ գեղեցիկ համեմատութիւն արեց նա բանուոր մշակի և ուսուցիչ մշակի մէջ. մէկը մի փայտասով ծածկուած ցերեկեան աշխատնելի չարչարանքից յետոյ անհանգիստ քնի մէջ գտնում էր իւր ֆիզիքական ծանր աշխատանքից պատճառած ցաւը, միւսը մինչ աքլորականչ արշալոյսն նրան տած մտաւոր աշխատանքից մաշուած կրծացաւից հոգին է քաղցում վաղուան դասերը պատրաստելով: Պ Մելիքեանցն ասաց, որ լաւ ուսուցիչներ շատ քիչ ունենք, այդ իսկ պատճառաւ Ղազարեանցների կորուստը մեզ համար անդառնալի է: Իրաւամբ պ. Մելիքեանը նշանակ պարտում էր կոչել մանկին, որ շատ անխիղճ է իւր ընտրութեան մէջ. նա տանում է պիտանիներին և իւր ճանկից բաց թողնում անպիտաններին, դատաճաններին և խլութեանց զարը վերջացրածներին .

Ոչ միայն պպ. Պանճուլաշեանի և Մելիքեանի ճառերը, այլ և Ղազարեանցի բոլոր ծանօթները, նորա ընկերները աշակերտները և ծառայակիցները վկայում են հանգուցեալ լաւ մտաւոր աշխատութեան:

Հանգուցեալը թողեց անմխիթար սգոյ մէջ իւր այրին, Երևանի հայ օրիորդաց դպրոցի վարժուհի տ. Ֆլօրեանցիային: Մարդ և կին իրարանց նուիրել էին մանուկ սերնդի դաստիարակութեան գործին. եթէ այրը չկարողացաւ երկարատև անել իւր գործունէութիւնը, գոնէ կնոջը երկար տարինել իւր հանգուցեալ ամուսնու պարտքը կատարել

Հանգիստ Յակովբ Ղազարեանցի ոսկերներին. նորա յիշատակը օրհնութեամբ եղիցի:

—

Ամսոյս 17-ին տեղւոյս Առաքելոց Սրբազան Սուրբհանցը ուղեւորուեց Տփխիս սեփական գործերով և, ինչպէս ասում են, շուտով վերադառնալու է:

Տիկին Իզաբելլայի ձեռնածուական ներկայացումը շատ յաջող անցաւ։ Դահլիճի մեծ մասը լի էր հանդիսականներով, որք միանգամայն գոհ մնացին։ Տիկնոջ երկրորդ ներկայացումը լինելու է վաղը կիւրակէ օրը, ամսոյս 23-ին։

—

Ամսոյս 20-ին երեկոյեան մանր, բայց երկարատև անձրև եկաւ։ Եղանակը բաւական ցրտած է։ Մօտաւորապէս բարձր լեռների մեծ մասը ծածկուած է ձիւնով։

—

Վաճառվում է Երևան քաղաքում Դէյստվիտէլնիյ Ստատսկիյ Սովէտնիկ Մելիք Աղամալեանցի հետևեալ կայքը։

1. Տունը, որտեղ կինում է ինքը պ. Մելիք Աղամալեանցը, և տան առաջի այգին։

2. Տունը, որ տեղաւորված է գանձարանը (Казначейство).

3. Այգին, որը գտնվում է Գալմայում։

Գների համար հարցնել նոյն իսկ տիրոջից։

ԱՂԵՔՍԱՆԴՐՊՈԼՅԻ

Զաւտհիլջի գրիգոր Սիմոնովը գալով Երևան, յայտարարում է, որ ունի պատրաստի ճակատի կամ գոչի քորոցներ, ականջի գինաեր բրոժկէք և զանազան տեսակ մատանիքներ։

Հարցնել Հաջի փիլաւումի խանութներում, բուլվարի հանդէպ։

ЧАСТНАЯ ШКОЛА

П. А. Шагума

Объявляетъ,

что преподаваніе Русскаго и туземныхъ языковъ будетъ продолженіе всего академическаго года. Шагумъ.

Պ. Ա. ՇԱԳՈՒՄԻ

Մասնաւոր ուսուցչարանը յայտնում է,

որ Ռուսաց և տեղական լեզուները աւանդվելուն ամբողջ ուսումնական տարին անընդհատ։

Շագում։

ИЗВѢЩЕНІЕ

На дняхъ прибыла всемірно извѣстная престидижитаторша г-жа Изабелла и будетъ имѣть честь дать двѣ экстренныхъ антиспиритическое и магическ. представленій, которыя были даваемы ею въ Москвѣ во время празднествъ священнаго коронованія ИХЪ ИМПЕРАТОРСКИХЪ ВЕЛИЧЕСТВЪ въ народномъ театрѣ. О днѣ представленія и программа объявлено особыми афишами.

АДВОКАТЪ ЕВГЕНІЙ ДМИТРІЕВИЧЪ ТИХОМИРОВЪ

Принявъ на себя веденіе судебныхъ дѣлъ Эриванской Городской Управы, принимаетъ веденіе таковыхъ и частныхъ лицъ, какъ въ мировыхъ учрежденіяхъ, такъ и въ общихъ. Защита уголовныхъ дѣлъ спеціально. Совѣты и веденіе дѣлъ бѣдныхъ-безплатно. Справляться въ бюро Алтунова.

ՓՈՍՏԱՐԱՆ

ԵՒԳԵՆԻՅ ԴՄԻՏՐԻԵՎԻՉ ՏԻԽՕՄԻՐՈՎԸ

Ընդունելով իւր վերայ Երևանայ քաղաքային կառավարութեան գործերը պաշտպանելու, ընդունում է այդպիսի գործեր նաև մասնաւոր անձինքներից, ինչպես հաշտարար դատաստաններում, նոյնպես և միւս Ադքաանների համար խորհուրդները և գործերի պաշտպանումը — ձրի է լինելու։ Առանձնապես ընդունում է քրէական գործերի պաշտպանումը։ Հարցնել Ալթունովի բիւրօյում։

Խմբագիր—հրատարակիչ ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ։

Дозволено цензурою 21 Октября 1883 года. гор. Эривань

Типографія Эмина Теръ—Григоріанъ.

ՅՕԳԱՑՈՑ

13, 14 և 15 ին ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Առաւօտ	կէս օր	Երեկոյ
անբնային		
Բէօմիւրի ջերմաչափով		
+ 8	+17	12

16 և 17 ին ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Առաւօտ	կէս օր	Երեկոյ
արև		
Բէօմիւրի ջերմաչափով		
+ 8	+ 16	+ 11

18 ին ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Առաւօտ	կէս օր	Երեկոյ
արև		
Բէօմիւրի ջերմաչափով		
7	14	11

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՄՄԻ ՏԱԿՍԱՆ

ՄԻՍ	կ.
Ցաւարի, ֆունտը	6
Ոչխարի —	6
Գառան —	6
ՀԱՑ	
Հասարակ, լիտրը	22
Սպիտակ ալիւրից ֆ.	6
ԻՒՂ	
Հալած, ֆունտը	35
Կարագ —	30
Դմակ —	
Ձրագուէ մոմ ֆ.	20
Սապօն, տեղական ֆ.	18
— Թիֆլիզի —	14
Նաւթ ֆ.	4
Հաւի ճուտ —	15